

ՏԱՍՆԵՐՈՐԿ ՏՍՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միջինայն ամբողջությամբ մեջ:
Օտարապետացիքը սխմում են ուրբաթի
Կապույտ. Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):
Յայտարարութիւն ընդունում է, առին լեզուով:
Յայտարարութիւնները համար գծարում են
խորանայն ըստին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Կովկասեան համալսարան.— ԵՆԲԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Գանձակից: Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Թիբեթի և Տայիկի լեռնաշղթայի Բաղաբախան տեսութիւն: Ֆրանսիա: Նամակ Թիբեթից: — ՀԵՆՈՒԿԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Նամակ Մոսկովայից:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռուս մայրաքաղաքների լրագրութիւնը նորից սկսեց խօսել Կովկասեան համալսարանի վրա: Այդ հարցը նորից զարթեցնելու առիթ եղաւ այն խոշոր նուիրատուութիւնը յօգուտ լինելու Կովկասեան համալսարանի, որ արեւ են պ. պ. Ա. Կորզանով, Ա. Պրիգոնով և Փիլիթով եղբայրները:

Համալսարանի պահանջը մեզանում, քանի զուտ է, աւելի և աւելի սաստիկ է զգացվում և մենք հաւատարմութեամբ ենք, որ եթէ յոյս լինէր Թիֆլիսի մէջ համալսարանի իրագործման, — վերև յիշված նուիրատուութիւնները աւելի և աւելի սովորական բան կը դառնային մեզանում:

Թիֆլիսի համալսարանի գաղափարի թըշնամիները բերում են միշտ, որպէս ապացոյց թէ մեզանում այդ տեսակ հիմնարկութիւն չէ կարող աշողլել այն իրողութիւնը, իբր թէ Անդրկովկասում և Կովկասում չը կան բաւական թւով միջնակարգ դպրոցներ, որոնք կարողանային համալսարանին ուսանողների բաւականացուցիչ կոնտինգենտ տալ: Այդ տեսակներին մենք կը պատասխանենք որ, մեր կարծիքով, մեր երկիրը համեմատելով օրինակ Կազանի կամ Օդէսայի ուսումնարանական շրջանների հետ, ունի աւելի շատ միջնակարգ դպրոցներ: Բացի սորանից միջին Կազանի, խարկովի, Ալեքի կամ Օդէսայի համալսարանները ուսանողներ ունենալու համար յոյս

ենք ուսանողներ ունենալու համար յոյս են դնում իւրաքանչիւրը միմիայն իր ուսումնարանական շրջանի վրա: Կարծում ենք որ հիմնելով Օդէսայի համալսարանը, աւելի լուրջ յոյս ունենք որ նրա լսարանները կը յաճախեն և Ռուսաստանի այլ նահանգների երիտասարդները:

Յայտնի է որ Ռուսաստանում կայ մօտ 80 միլիոն ժողովուրդ և միայն 9 համալսարան, ուրեմն մօտաւորապէս մի համալսարան 10 միլիոն ժողովրդի վրա, այն ինչ ընկէ յցարիայում 5 միլիոն ազգաբնակչութեան վրա 5 համալսարան կայ, ուրեմն իւրաքանչիւր միլիոն ժողովրդի վրա մի համալսարան է գալիս: Եթէ ուրեմն 10 միլիոն ժողովրդի վրա մի համալսարան է հաշուում, պէտք է կարծել որ իւրաքանչիւր համալսարանը հիմնված է ոչ թէ այս կամ այն նահանգի համար միայն, որի կենտրոնում նա դասնում է, բայց աւելի ընդարձակ շրջանի մտաւոր պէտքերի համար և ուսուցիչները համալսարանը իր ուսանողների կոնտինգենտը ստանում է պետութեան ամբողջ տարածութիւնից: Այդպէս էլ կարելի է յուսալ, որ եթէ Թիֆլիսում կը հիմնվի մի համալսարան, նա կունենայ ուսանողներ ոչ թէ միայն Անդրկովկասի և Կովկասի զաւառներից, բայց և Ռուսաստանի ներքին նահանգներից, ինչպէս ուսաց միւս համալսարանները:

Բացի սորանից Կովկասեան համալսարանը Ռուսաստանի սահմանազուրկ երկրի մէջ գտնվելով, կը զրաւի անշուշտ ուսում առնել և բարձր ուսում ստանալ ցանկացող երիտասարդներին Թիբեթից և Պարսկաստանից: Գա կունենայ, ուրեմն, կրթիչ ներգործութիւն ոչ թէ միայն մեր երկրի վրա, բայց և մեր երկրին հարեան երկիրների վրա:

Նոյն իսկ այդ նպատակով, որպէս զի

ուսաց զիտութիւնը կրթիչ ներգործութիւն ունենար հարեան ախական երկիրների վրա, մանաւանդ այդ երկիրների հայ բնակչութեան վրա, ինչպէս մենք մի կրթիչ անգամ առաջարկեցինք, անհրաժեշտ էր լինէր թոյլ տալ որ համալսարանների դասախօսութիւններից մի քանիս, դոնէ, կարգացվէին հայերէն լեզուով:

Գարով նրեթական նուիրատուութիւններին յօգուտ ազգայ համալսարանի, մենք հաստատ կարող ենք ասել որ նուիրատուութիւնները կը կրկնապատկվին, եթէ այժմ կովկասեան համալսարանին արվեր ամբողջ Ռուսաստանից սիրված, անուսանողի հանգուցեալ կայսրի անունը: Եթէ համալսարանը հիմնվի կայսր Ալեքսանդր II-ի յիշատակին, անհամեմատ աւելի մեծ գումարներ կը նուիրվէին, նրա իրագործմանը, քան թէ այժմ հիմնվող որբանոցի, որովհետև որբանոցը, որքան էլ անհրաժեշտ է, նշանակութիւն ունի միայն Թիֆլիսի համար, իսկ համալսարանը նշանակութիւն կունենար ամբողջ Կովկասի և Անդրկովկասի համար:

Համալսարանը Թիֆլիսի մէջ, — կը զրանէր ամենաջերմ համակրութիւն և արձագանք մեր բոլոր զաւառական քաղաքներում: Տեղացին ուզում է բարձրագոյն ուսում տալ իր որդուն, բայց ուզարկելով նրան հիւսիս, շատ անգամ զրկվում է նրանից, կամ անբուժելի հիւանդութիւն, շատ անգամ անգութ մահը, անսովոր կլիմայի պատճառով, բաժին է լինում թշուառ երիտասարդի, կամ ընկնելով ծայրայեղ, յեղափոխական ուսուցիչութիւնների ազդեցութեան տակ, կովկասցի երիտասարդը, կովկասեան սարերի այն կողմը, օտարանում է իր մայրենի կովկասեան երկրի կեանքից և անհետանում է...:

Ամենայարմար բոլորն կը լինէր այժմ

յարուցանել Ալեքսանդր II-ի անմահական յիշատակին կովկասեան համալսարանի հիմնելու միտքը: Յուսանք որ մեր միտքը ամենաջերմ արձագանք կը գտնի ամեն մի մըտածող մարդու սրտում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՉԱԿՑ

Յունիսի 17-ին

Անցեալ 1880 թիւ հոկտեմբերի 11-ից սկսեալ մեր ժողովարարութիւնը ինպատու ձեռնարկեցին յետաձգվեցաւ մինչև այսօր այն պատճառով, որ յոյս ունենք այն մարդկանցից ևս ստանալ նուէրներ, որոնք զանազան պատճառներով մնում էին. բայց ի զուր սպասեցինք և այժմ արտագրելով ստորագրութեան մատենանց անուսանական ցուցակը, խնդրեմ հրատարակել պատուական լրագրի միջոցաւ ի գիտութիւն նուիրատուաց:

Ստորագրութեան գումարն եղաւ 1166 ռ., որից համաձայնութեամբ ժողովարարութեան անձանց տուեալ եղի մէկ վանկի չբաւոր մարդու 26 ռ. մնաց 1140 ռ. և սրանից ունեմ զբաժն խմբագրութեանը 700 ռ. նոյեմբերի 5-ին 1880 թ. և երկրորդ անգամ զեկտեմբ. 29-ին նոյն տարվայ 275 ռ., որ է 975 ռ., մնում է այժմ 165 ռ. անայս մնացորդ գումարը ցուցակի հետ ուղարկեցին խնդրեմ խնամարար հասուցանել ըստ պատկանելոյն:

Նուիրատուաց անուսանական ցուցակը. — Կղբայք Նաբաթեանց 100 ռ., Կղբայք Տէր-Ներսէսեանց 50 ռ., Աղեքսանդր և Գրիգոր Խաճակեանց 50 ռ., Ղահրաման Ս. Օհանեսեանց 25 ռ., Մ. Մանուկեանց 15 ռ., Մամիկոն Մկրտումեանց 10 ռ. և իւրաքանչիւր ամիս 2 ռ., նոյն յետեր, զեկտեմբերի 1880 թ. և յուսիսի 14 ռ., Աղեքսանդր Կապեանց 10 ռ., տէր Եղիշ և Արշակ Աղբերեցեանց 10 ռ., Բարսեղ Երեմյանց 5 ռ., Խլան Կարապետ

խորենացու խօսքերը և այդ խօսքերով նա ցոյց էր տալիս նրա հակասութիւնները և սխալները: Զարմանալի բան է, որ Ֆէլիքստեմբերից պ. Էմիլի մէջ բերած տասնաւոր փաստերից և ոչ մէկը չէ յիշում:

Բնթիւրցողին աւելի չօգտիւնի և հականայի անելու համար Մար-Արասի անվաւերականութիւնը՝ եւս այստեղ առաջ կը բերեմ այդ փաստերից մի երկուսը:

ա) Խորենացին Վաղարշակի բերանով ստում է, թէ սրա ժամանակ (Բրիտանոյց 150 տարի առաջ) իբր թէ Հայաստանում տիրել կարգ չը կար, ոչ մեհանների պաշտամունքը, ոչ աշխարհի զխաւորներից առաջինն էր յայտնի և ոչ վերջինը. ամեն բան խառնիխառն և վայրենի (խոր. Ա. գլ. Թ.) թէ՛ ցանկալով իմանալ հայոց ազգի պատմութիւնը և չը գտնելով ոչ մի տեղական աղբիւր և ոչ էլ մի գրադէտ հայ մարդ, Վաղարշակը յանձնում է Մար-Արաս անունով մի ասորու գնալ Նիսուէ և այնտեղի գիւմարից արտագրել ու բերել իրան հայոց պատմութիւնը: Բայց մի և նոյն Խորենացին իր պատմութեան մէջ քանիցս անգամ յիշում է, որ հեթանոս հայերի մէջ բրմբուր գրում էին պատմական նշանաւոր անցքերը, թէ կային մեհանական գրեր. կար և մի գիրք թագաւորացի անունով, ուր արձանագրում էին հայոց թագաւորների արարքը: Բայց զրանցից կային և այլ շատ աղբիւրներ. ինչպէս — չբանաւոր երգարանները, զի պատմական երգերը, որոնցից շատերը ժողով

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Յունիսի 12-ին

Յաւում եմ, որ զբաղված լինելով պարագայ մեզաներով, չը կարողացայ իր ժամանակին հանել տալ «Մշակի» ընթերցողներին Մոսկովայի հասցիական ընկերութեան վերջին նիստի մասին: Ինչպէս այդ եւս արել եմ արդէն մի քանի անգամ. Բայց որովհետև այդ նիստի վերաբերութեամբ մօտ օրերս լոյս տեսաւ «Մշակի» 100 համարում մի թարգմանական յօդուած, որտեղ մի քանի փաստեր և իրողութիւններ միանգամայն աղաւաղած են և ծուռած — եւ աւելորդ չեմ համարում համառօտ կերպով մասնաւորել «Մշակի» ընթերցողներին այն տպաւորութիւնը, որ թողեց իմ վրա վերջին նիստը: Այստեղ զըլխաւորապէս եւ կը խօսեմ նիստի այն մասի վրա, որ վերաբերվում է հայոց պատմական գրականութեանը. խօսքս պ. Էմիլի ընթերցողի մասին է, որ այդ օրը կարգաց ժողովում իր մի նոր բրջուրի առաջարկեց — Մար-Արաս կատիւնան և նրա պատմութիւնը:

Նախ և առաջ եւս պէտք է ասեմ, որ «Մշակի» 100 համարում ապա՛ծ թարգմանական յո-

դուածը Ֆէլիքստեմբերի — Ֆէլիքստեմբերի յատուկ երգիծական և ծաղրական պարագաներով, որոնց հայ թարգմանիչը՝ չը գիտեմ ինչո՞ւ դուրս է թողել հայ ընթերցիչ և զրանով այն թեթեւ, Ֆէլիքստեմբերի յօդուածին տուել մի ծանրալիւռ ուսումնական զրուածի ձև: Եւ յայտնի բան է, որ այդպիսի յօդուածները միայն Ֆէլիքստեմբերի կարող են դուրս գալ «ՂՈՍԵՅ»-ի նման լրագրի լրագրի էջերում, յօդուածներ, որտեղ առանց փաստերի, առանց ապացոյցների կարելի է ուղղակի ասել, թէ «պ. Էմիլը ինքն ևս չէր հասկանում ինչ էր ասում»: Կամ թէ — «պ. Էմիլը համարելով խորենացու պատմութեան աղբիւրը համարելով ժողովրդական վիպասանութիւնը, շատ լաւ ասաց, լաւ՝ որովհետև կարծ է պատասխանը, իսկ կարծ է նրա համար որ բոլորովին մոթ է...»: Այս և սոյնանման սրամիտ (?) ֆրազներ է մէջ բերում ԳՈՍԵՅ-ի Ֆէլիքստեմբերը, որոնցից ընթերցողը ոչինչ չէ կարող հասկանալ, եւ աւելի մի օգուտ քաղել նրանցից:

Բոլորովին դիտաւորութիւն չունենալով բանալի սկսել անանուն Ֆէլիքստեմբերի հետ և ապարդիւն համարելով այդպիսի մի վարմունք իմ կողմից — եւս մի քանի խօսքով կաշխատեմ հաղորդել ընթերցողներին պ. Էմիլի ընթերցողի մասին, որի առիթով այնպիսի օտարութիւն կարծիք է յայտնել ԳՈՍԵՅ-ի ծաղրալար Ֆէլիքստեմբերը: Կրկնում եմ մի քանի խօսքով, որովհետև պ. Էմիլի գրքովը յուսովս լոյս կը

տեսնի և ամեն մէկը մեզանից կարող է կարգաւ նրան և ծանօթանալ մեր զրուական հայրենակցի կարծիքների հետ այնպիսի կարեւոր և առաջնակարգ խնդրի մասին, ինչպէս է Ասորի Մար-Արասը և նրա պատմութիւնը, որոնց հետ մինչև այսօր անբաժան կապված է և մեր ազգային պատմութեան սկիզբը:

Պ. Էմիլը իր ընթերցողի մէջ զարթեցրեց մի շատ հետաքրքրական խնդիր. նրա նպատակն է Ներքին այն քաղցէական ծագումը, որ մինչև այսօր վերադրած է մեր պատմութեանը Մար-Արասի շարժում, Ներքին նոյն իսկ Մար-Արասի գոյութիւնը, համարելով նրան մի կեղծ, մտաշածի անձն և ապացուցանել, որ բոլոր Հայկազունեաց պատմութիւնը՝ Հայկից սկսած մինչև վաճէ (մօտ 2000 տարվայ միջոց) ոչ թէ արձանագրած է եղել Նիսուէի զիւանում օտար և շատ անգամ թշնամի թագաւորների հրամանով (ինչպէս ասում է Խորենացին), այլ՝ ինչպէս ամեն մի հին ազգի պատմութիւն — առնված է ժողովրդական վիպասանութիւնից: Ուրեմն՝ մեր հնագոյն պատմութեան աղբիւրը ոչ թէ քաղցէական է կամ ասորեստանական, այլ բուն ազգային, որով նա աւելի հաւաստի է զանուն մեր աչքում և հաւատի արժանի, քան եթէ նա առնված լինէր օտար տէրութեան զիւանումից (ԱՐՄԻՆԻ) Այս էր պ. Էմիլի ընթերցողի գլխաւոր միտքը. բայց այս միտքը նա զարգացրեց և ապացուցեց զօրեղ փաստերով և խիստ յօգիբական հետազոտութեամբ. նա մէջ էր բերում